

ԱԼԻՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

կրտսեր գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
<https://orcid.org/0000-0003-0645-2270>
alinokkirakosyan@gmail.com,
+37491162677

DOI: 10.54503/1829-0116-2022.2-253

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԺԱՆՐԵՐ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ (СБОРНИК) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱԶԱՐԻ ԷԶԵՐՈՒՄ*

(տպագրվում է ՀՀ Գիտության կոմիտեի 21Т-6В290 ծածկագրով
թեմայի շրջանակներում)

Բանալի բառեր: բանահյուսություն, ավանդագրույց, ժողովրդական երգ, աղոթք, հանելուկներ, անեծք, օրհնանք, առած-ասացվածք, դիպաշար, մատենաշար:

Դեռևս XIX դարի 80-ական թվականներից Կովկասյան ուսումնական շրջանի վարչությունը ռուսաց լեզվով, Նախահեղափոխական ուղղագրությամբ հրատարակել է «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК) մատենաշարի թվով 46 հատոր:

СМОМПК մատենաշարը գիտատեղեկատվական շտեմարան է, որտեղ ամփոփված են Կովկասում բնակվող տարբեր ժողովուրդների՝ հայերի, վրացիների, թաթարների, ռուսների, դաղստանցիների, սվանների, աբխազների, ուդիների և այլ ժողովուրդների պատմության, ազգագրության, բանահյուսության, հնագիտության, լեզվաբանության, աշխարհագրության, բուսականագրության վերաբերյալ նյութեր: Ցավոք, СМОМПК-ի հատորներն այսօր բավարարուչադրության չեն արժանանում և երբեմն էլ վրիպում են ուսումնասիրողների տեսադաշտից, բայց մեծաթիվ մատենաշարի համակողմանի ուսումնասիրությունը կարող է նոր լույս սփռել Կովկասյան ժողովուրդների կենցաղի, ապրելակերպի, սովորույթների, ավանդույթների ուսումնասիրության վրա:

* Ընդունվել է տպագրության 21.12.2022 թ:

Մատենաշարի տարբեր համարներում ռուսերեն լեզվով լույս տեսած հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը տեղագրական-ազգագրական չափանիշների հաշվառումով կատարվել է բանահյուսական նյութերի թեմատիկ-բովանդակային դասակարգում, ինչը կարող է նպաստել միջազգային գիտական համագործակցության և Հարավային Կովկասի ժողովուրդների բարքերի, սովորույթների, ավանդույթների, բառ ու բանի, կյանք ու կենցաղի ուսումնասիրությանը:

Հայ ժողովրդական բանահյուսության ռուսալեզու ստեղծագործությունները վկայում են տարածաշրջանում բանահյուսական կարևոր իրողությունների առկայության մասին, որոնք իրենց պատմաաշխարհագրական բնութագրերով, համամարդկային ընդհանրություններով և ազգային առանձնահատկություններով կարող են մեթոդական հիմք հանդիսանալ ոչ միայն բանագիտության, այլև խնդիրն առնչվող տարբեր գիտակարգերի՝ ազգաբանության, մշակութաբանության, հոգեբանության, գրականագիտության, նշանագիտության, լեզվաբանության ոլորտների հետազոտությունների նորովի մեկնաբանությունների և միջազգային բանագիտական զուգադրական հետազոտությունների իրականացման ոլորտում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ դեռևս XIX դարի 80-ական թվականներին մինչև 20-րդ դարի սկիզբը Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Բաքվի, Երևանի նահանգներից, Չանգեզուրի, Նախիջևանի, Էջմիածնի գավառներից գրանցված ՇՄՄՈՒՄԿ մատենաշարի էջերում ռուսերեն թարգմանությամբ լույս տեսած հայ բանահյուսությունը հսկայածավալ, բազմաժանր և բազմաբնույթ է: Հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության բանահյուսական տարբեր ժանրերի նյութերն իրենց բազմաթիվ զուգահեռ դիպաշարերն ունեն հայ ժողովրդի բանահյուսական ժառանգության մեջ:

ALINA KIRAKOSYAN

Junior researcher

Institute of Archaeology and Ethnography NAS RA

SOME GENRES OF ARMENIAN FOLKLORE ON THE PAGES OF THE RUSSIAN-LANGUAGE COLLECTION OF THE CAUCASIAN EDUCATIONAL DISTRICT (CMDLTC)

Key words- folklore, legend, folk song, prayer, enigma, curse, blessing, sayings-proverbs, parallel plots, series.

Since the 80s of the 19th century, the Administration of the Caucasian Educational District has published 46 volumes of the "Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus" (CMDLTC) in Russian with

pre-revolutionary orthography. The (CMDLTC) series is a scientific information database that summarizes materials on history, ethnography, folklore, archeology, philology, linguistics, geography and lexicography of various peoples living in the Caucasus, including the Armenians, Georgians, Tatars, Russians, Dagestanis, Svans, Abkhazians, Udins and other nations.

Unfortunately, the volumes from the CMDLTC series are not paid the due attention to, and sometimes they completely fall out of the field of the researchers view, while a comprehensive study of the valuable series could shed new light on the study of household, lifestyle, traditions and customs of the peoples in the Caucasus.

The different genres of Armenian folklore published in Russian in different issues of the series have been classified according to topographical and ethnographic criteria, which can contribute to international scientific cooperation and the study of the manners, customs, traditions and life of the peoples of the South Caucasus.

The Russian language materials of Armenian folklore testify to the presence of important folklore realities in the region, which with their historical-geographical characteristics, universal commonalities and national characteristics can be a methodological basis not only for philology, but also for various disciplines related to the issue: ethnology, cultural studies, psychology, literary studies, semiotics, linguistics. in the field of new interpretations of field research and implementation of international scientific comparative research.

Summing up, it can be noted that from the 80s of the XIX-th century until the early XX-th century in Elizabetspol, Tiflis, Baku, Yerevan, Zangezur, Nakhichevan and Etchmiadzin provinces the Armenian folklore, published in Russian on the pages of CMDLTC series was bulky, multi-genre and multi-faceted. The multi-genre materials of folklore in Armenian intangible cultural heritage have parallel suzettes in the cultural heritage of the Armenian people.

АЛИНА КИРАКОСЯН

Младший научный сотрудник

Институт археологии и этнографии НАН РА

НЕКОТОРЫЕ ЖАНРЫ АРМЯНСКОГО ФОЛЬКЛОРА НА СТРАНИЦАХ РУССКОЯЗЧНОЙ СЕРИИ ИЗДАНИИ КАВКАЗСКОГО УЧЕБНОГО ОКРУГА (СМОМПК)

Ключевые слова -фольклор, предания, народная песня, молитва, загадка, проклятие, благословение, пословицы-поговорки, параллельные сюжеты, серия.

С 80-ых годов XIX-ого века Управление Кавказского учебного округа опубликовало на русском языке с дореволюционной орфографией 46 томов «Сборника материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК).

Серия СМОМПК представляет собой научно-информационную базу данных, в которой обобщены материалы по истории, этнографии, устному народному творчеству, археологии, филологии, лингвистике, географии и лексикографии различных народов, проживающих на Кавказе, в том числе и армян, грузин, татаров, русских, дагестанцев, сванов, абхазцев, удинов и других.

Разные жанры армянского фольклора, опубликованные на русском языке в разных выпусках серии изданий, классифицированы по топографическим и этнографическим признакам, что может способствовать международному научному сотрудничеству и изучению нравов, обычаев, традиций, быта народов Южный Кавказ.

Русскоязычные материалы армянского фольклора свидетельствуют о наличии в регионе важных фольклорных реалий, которые с их историко-географическими характеристиками, общечеловеческими общностями и национальными особенностями могут быть методологической основой не только для филологии, но и для различных дисциплин, связанных с тематикой: этнология, культурология, психология, литературоведение, семиотика, лингвистика в области новых интерпретаций полевых исследований и реализации международных научных сравнительных исследований.

Подводя итоги, можно отметить, что с 80-ых годов XIX-ого столетия до начала XX-ого века в Елизаветпольской, Тифлисской, Бакинской, Ереванской, Зангезурской, Нахичеванской и Ечмиадзинской губерниях армянский фольклор, опубликованный в русском переводе на страницах серии СМОМПК, обширный, многожанровый и многогранный. Многожанровые материалы устного народного творчества Армянского нематериального культурного наследия имеют множество параллельных сюжетов в культурном наследии Армянского народа.

Ներածություն

1880-ական թվականներին Կովկասյան ուսումնական շրջանի վարչությունը հավաքել է «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК) մատենաշարի թվով 46 հատորներում ռուսաց լեզվով, նախահեղափոխական ուղ-

ղագրությամբ հրատարակել է Կովկասյան տարածաշրջանում բնակվող տարբեր ժողովուրդների (այդ թվում նաև հայերի) մշակութային ժառանգության վերաբերյալ հսկայածավալ նյութեր: Մեր խնդիրն էր ներկայացնել մատենաշարի էջերում լույս տեսած հայ ժողովրդական բանահյուսության որոշ ժանրեր, ինչպիսիք են՝ ավանդագրույցները, գրույցները, ժողովրդական երգերը, աղոթքները, հանելուկները, անեծք-օրհնանքները, առած-ասացվածքները, համեմատել հայոց մեջ լայն տարածում ունեցող հայտնի դիպաշարերի տարբերակների հետ, որոնք ցայսօր կենցաղավարում են մեր ժողովրդի բանավոր խոսքում և հանդիսանում են հայ ժողովրդի ոչ նյութական բանահյուսական ժառանգության անբաժանելի մասը:

Հատորներում լույս տեսած հայ բանահյուսության տարբեր ժանրեր, ցավոք, ցայսօր դուրս են մնացել հետազոտողների տեսադաշտից՝ ֆիզիկական մաշվածության, մատենաշարի տարբեր հատորներում զետեղված լինելու, մինչև խորհրդային ուղղագրության հարուցած դժվարությունների պատճառով և դրանցում զետեղված հայ բանահյուսության տարբեր ժանրերի նյութերի ուսումնասիրությունը նոր լույս կսփռի հայ բանահյուսության միջազգային ճանաչմանը:

1. Ավանդագրույցներ

Մի խումբ ավանդագրույցների հիմքում ընկած է աստծո նկատմամբ հավատի զորությունը, որի շնորհիվ հերոսները կա՛մ փրկվում են ծանր փորձությունից, կա՛մ էլ սխալ ճանապարհից ետ կանգնում ու դարձի գալիս: ՇՄՈՄՈՒԿ-ի 1889 թ. 7-րդ թողարկման երկրորդ բաժնում Կուսապատի /Կասապետի դպրոցի տեսուչ Գ. Իսրայելովը ներկայացնում է բանասաց Ա. Տեր-Գրիգորևայից գրառած գրույց «Արծաթագործն ու հրեան» (Израелов, 1889, сс. 86-87) վերնագրով, որի համառոտ դիպաշարը հետևյալն է. ծովափին ապրող հրեան զբաղվում էր առևտրով, իսկ հարևանը՝ արծաթագործությամբ: Աստծո ամեն օր արծաթագործը մուրճով խփում էր սալին և ասում. «Մեծ է Փրկչի զորությունը»: Հրեան թերահավատորեն էր վերաբերվում արծաթագործի հավատքին: Մի օր, երբ արծաթագործը նորոգում էր թագավորի մատանին, հրեան այն վերցնում է ու նետում ծովը: Արծաթագործը դարձյալ մուրճով երեք անգամ հարվածում է սալին՝ ասելով. «Մեծ է Փրկչի զորությունը»: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, արծաթագործը, համոզված լինելով, որ իր վերջը եկել է, ծովափից ձուկ է գնում, որպեսզի վերջին անգամ ճաշի ընտանիքի հետ: Ձկան բացված փորում գտնում են

թագավորի մատանին: Իմանալով եղելությունը՝ հրեան սկսում է հավատալ Աստծուն և մկրտվում է:

Այստեղ նկատում ենք երեք մոտիվ՝ արծաթագործի կողմից մուրճով սալին հարվածելու հնագույն հավատալիքը¹, որտեղ մուրճով գնդանին հարվածելը խորհրդանշում է չարխափան ուժի կողմից չարի սանձահարումը, (Թադևոսյան, 2007, էջ 120) կորսված մատանին ձկան փորից գտնելը՝ իբրև արծաթագործի անսասան հավատքի դիմաց փոխհատուցում, և կատարված հրաշքի շնորհիվ անհավատին դարձի բերելը: Այս գրույց-հեքիաթն ունի Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառված իր զուգահեռները, որոնք համապատասխանում են Հանս-Յորգ Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերը» (Hans-Jorg Uther, 2011, pp. 269-270) նշացանկի 460A թվահամարի տարբերակներին, որտեղ նույնպես Աստծո պատվիրանները կատարողները հասնում են իրենց նպատակին (Սրվանձտյանց, 1978, էջ 186-189: Հաճեան, 1907, էջ 81-88):

Մատենաշարի 34-րդ համարի երրորդ բաժնում 1892 թ. Արծվանիկ գուղի դպրոցի տեսուչ Եփ. Մելիք-Շահնազարովը “Из поверий, предрассудков и народных примет армян Зангезурского уезда” վերնագրի տակ ներկայցնում է Չանգեզուրի հայերի բանահյուսական և ազգագրական կենցաղը: Աղավնո գետի աջ ափին գտնվող Ծիծեռնավանքի մասին ստուգաբանական-բացատրական ավանդազրույցը պահպանված է նաև Ղանալանյանի «Ավանդապատում» գրքում, որի համաձայն՝ Արցախի Քաշաթաղի շրջանի Հռչաս գյուղի մելիք Թումանը ճնշում էր իրեն ենթակա գյուղացիներին և քահանային: Վերջինս Մելիքից ազատվելու համար անեծքաթուղթ է գրում, գցում Մելիքի սենյակն ու փախչում: Մելիքը կորցնում է կնոջը, երեք որդիներին, ունեցվածքը և հասնում Հռոմ, որտեղ նա մտնում է վանքերից մեկում, ապրում ճգնավորի կյանքով և աղոթում իր հոգու փրկության համար: Որոշ ժամանակ անց մելիքը կծում է Պետրոս առաքյալի ճկույթը (ծիծեռնը): Դրանից վանքի սրբապատկերները գետնին են թափվում: Քահանաները ուզում են հանել Մելիքի բերանից մասունքը և իրեն էլ սպանել: Սեղանից մի ձայն հորդորում է ձեռք չտալ մելիքին: Վերջինս վերադառնում է հայրենիք, կառուցում Ծիծեռնավանքը, որտեղ ամփոփում է Պետրոս

1 Այստեղ նկատվում է կռանով սալին հարվածելու հայտնի սյուժեն, սակայն դարբնին փոխարինում է արծաթագործը, որը յուրաքանչյուր ուրբաթ գործողությունը կատարելու փոխարեն կատարում է ամեն օր:

առաքյալի ճկույթը՝ ծիծեռնը (Ширакуни, 1904, ԸՍ. 195-199. Ղանալան-յան, 1969, էջ 231):

19-րդ հատորում հիշատակվում է Արցախի Չանախչի գյուղի Կուսանաց անապատում ապաստանած կույսերի մասին ավանդագրույցը, որի համաձայն 1797թ. Աղա Մահմեդ շահի զորքը ներխուժում է գյուղ, կույսերից մեկը չի հասցնում փախչել, և երբ պարսիկները մոտենում են, կույսին հաջողվում մոտակա բլրի գագաթից իրեն նետել ծորը: Աներևույթ զորությամբ՝ աղջիկը անվնաս իջնում է և թաքնվում անտառում (Мелик-Шахназаров, 1894, ԸՍ. 78-79. Ղանալանյան, 1969, էջ 234-235):

Մատենաշարի 28-րդ հատորի երկրորդ մասում տեղ է գտել Ելիզավետպոլի արհեստագործական ուսումնարանի ուսուցիչ Պ. Տոնի-Լի հաղորդած և գրառած, «Ճշմարիտ հավատը փրկում է կրակից» ավանդագրույցը (Тониев, 1900, Ը. 22), որի մեզ ավելի հայտնի տարբերակը Գորիսի Թոնրատափի ավանդությունն է (Ղանալանյան, 1969, էջ 98), երբ կինը «Աստծո սիրո համար» համբուրում է օտարականին, ապա ամոթից գորտ է դառնում, սակայն СМОМПК-ի տարբերակում կինը կրակի մեջ նետվելով՝ գորտ չի դառնում, այլ թոնիրը պատվում է կանաչով և ծաղիկներով: Ավանդագրույցի գերակշիռ տարբերակներում կինը ծուկ է դառնում (Աբեղյան, 1975, էջ 163: Սրվանձտյանց, 1978, էջ 52: Լալայեան, 1913, էջ 33-34): Բյուրակնի էջերում պահպանված «Ոսկի ծուկը» առասպելական գրույցի մեջ երեցկնոջ, ծերունի մուրացկանի և ջրով լցվող թոնրի պատմությունն ավարտվում է ջրհեղեղով, որից ծուկ է գոյանում, ծուկի մեջ մանր ձկներ էին լողում, որ գյուղի բնակիչներն էին և նրանց մեջ մի հսկա ոսկի ծուկ, որ ծուկի խորքերում է բնակվում. «Ոսկեփայլ փայլակը լողացող ոսկի ծուկին ցոլացումն է, բարի տան տիկնոջ անջնջելի յիշատակը, Աստուծոյ արդար բարկութեան ապացոյցը» (Նուրհան, 1898, էջ 47):

Գրիգոր Խալաթյանը առաջինն է նկատել, որ այս հայկական գրույցը ասորական Դերկետո դիցուհու հին առասպելն է, որ բերել է Դիոդոր Սիկիլացին մ.թ.ա. 1-ին դարում (Աբեղյան, 1975, էջ 163): Առապելի համաձայն՝ Աֆրոդիտեն դիցուհուն բռնի սեր է ներշնչում իր տաճարի քրմերից մեկի նկատմամբ: Դերկետոն իր դուստր Շամիրամի ծնվելուց հետո ամոթից իրեն ձգում է լճի մեջ ու ծուկ դառնում: Թե՛ հայկական և թե՛ ասորական ավանդություններում այս երկու կանայք ծուկ են դառնում՝ հանցավոր սիրո պատճառով ամոթից իրենց ձգելով ջուրը (Աբեղյան, 1975, էջ 164):

Հայկական այս գրույցը, չնայած իր քրիստոնեական բնույթին, պատկանում է ամբողջ Առաջավոր Ասիայում տարածված հին առասպելական ավանդությունների թվին և Մանուկ Աբեղյանի հավաստմամբ՝ այն Աստղիկ-Դերկետոյի պաշտամունքի հեթանոսական մի գերապրուկ է (Աբեղյան, 1975, էջ 163):

Նույն հատորում պահպանված Ալեքսանդր Մակեդոնացու մահվան մասին պատմող վարքաբանական ավանդագրույցում (գ. Բայանդուր, բանասաց՝ Մադաթ Մադաթով) սգավոր մայրն արգելում է որդուն հուղարկավորել: Պալատականները ելք չգտնելով՝ մորը փակում են սենյակում որդու դիակի հետ և առաստաղից հաց կախում: Մայրը, երեք օր անընդմեջ ողբալուց հետո, որդու դիակի վրայով բարձրանում է դեպի հացը: Պալատականները նախատում են մորը, որ հաց ձեռք բերելու համար հենց ինքը անարգեց որդու մարմինը: Մայրը համաձայնում է թաղել որդուն (Буниатова, 1900 թ. 10, Ղանալանյան, 1969, էջ 280): Ի վերջո սկսվել է կենսապահովման մշակույթի անհրաժեշտ պայման է, ինչն էլ «առասպելաբանական մակարդակում դիտարկվում է հաղորդակցող օղակ՝ այս և այն կողմնային աշխարհների, կյանքի ու մահվան, ողջերի և մեռածների միջև» (Հայրապետյան, 2022, էջ 232):

“Земля, солнце и луна. явление природы” «Երկիր, արև և լուսին, բնության երևույթներ»՝ ենթավերնագրի տակ ներկայացված են 9 միավոր բանահյուսական նյութեր, օրինակ՝ հետևյալ բավականին լայն տարածում ունեցող ավանդագրույցը Արև ու Լուսին քույր և եղբոր մասին, որոնք Աստծո զավակներն են և Հոր հրամանով պետք է գիշեր-ցերեկ հսկեն աշխարհը: Քույր ու եղբայր սկսում են վիճել, թե ով է հսկելու գիշերը, ով՝ ցերեկը: Երբ հայրը նախատում է, եղբայրը պարտավորվում է հսկել գիշերը: Եվ քանի որ Արևը ամաչում էր երևալ մարդկանց, հայրը աղջկան ասեղներ է տալիս, որ ով համարձակվի նայել նրան, աչքերը ծակծկի (Мелик-Шахназаров, 1904, թ. 91-92):

Կամ երկիրը հենված է հսկա եզան եղջյուրների վրա: Երբ ճանճերը նրան անհանգստացնում են, ցուլը գլուխը թափահարում է և երկրաշարժ է լինում (Мелик-Шахназаров, 1904, թ. 91): Այս ավանդապատումը ևս իր տարբերակներն ունի հայ բանահյուսության մեջ (Հարությունյան, 2018, էջ 15): Բանահյուսական նյութերը հաճախ ներկայացվում են ազգագրական հավատալիքներին զուգահեռ: Գիսաստղ տեսնելիս երազանք պահել և հավատալ, որ այն անպայման կկատարվի (Мелик-Шахназаров, 1904, թ. 92):

24-րդ համարի 2-րդ բաժնում տեղ են գտել 42 միավոր հայկական հեքիաթներ և ավանդազրույցներ, որոնցից 20 միավորը ներկայացնում է հոգևորական Գրիգորի Բունիաթովը: Վերջինիս հաղորդած զրույցներից Սողոմոն իմաստունի և հովվի մասին ավանդազրույցն ունի հետևյալ բովանդակությունը՝ Սողոմոն իմաստունը իր պալատականներից մեկի հետ զբոսնում էր դաշտում: Նախրի մոտով անցնելիս ասում է, որ կովի որովայնում եղած հորթի ճակատին նշան կա: Հովիվը հակադարձում է, որ ոչ թե ճակատին նշան կա, այլ պոչն է ծավլած ճակատին: Սողոմոն իմաստունը իմանում է կովի արժեքը, կրկնակի վճարում և մորթել տալիս: Տեսնելով, որ հովիվը ճիշտ էր, հարցնում է, թե ինչու¹ է այդքան խելացի լինելով հովիվ դարձել: Հովիվը պատասխանում է, որ իր ծննդյան ժամանակ իր բախտի ղոչը ոտքը տարել է, եղջյուրները քորել, դրա համար էլ ինքը չորացել է, իսկ Սողոմոն իմաստունի ծննդյան ժամանակ՝ դմակն է քորել (Бунятов, 1898, сс. 101-102. Ղանալանյան, 1969, էջ 341): Սողոմոնը առատորեն պարգևատրում է հովվին, վերջինս կյանքի մնացած մասն ապրում է լիության մեջ¹:

2. Ասույթաբանական-բանաձևային բանահյուսություն

СМОМПК-ի տարբեր հատորներում տեղ են գտել վիպական բանահյուսության ասույթաբանական-բանաձևային այնպիսի փոքր ժանրեր, ինչպիսիք են՝ առած-ասացվածքները, երդումները, օրհնանք-բարեմաղթանքները, ժողովրդական աղոթքները, փաղաքշական արտահայտությունները, հանելուկները և այլն: Այսպես երկրորդ հատորի (1882թ.) երկրորդ մասում՝ Երևանի գիմնազիայի ուսուցիչ Ս. Չելիսկին Պարսկաստանից Նախիջևանի շրջանի Երևան գավառ վերաբնակեցված հայերից գրառել և թարգմանել է հսկայածավալ բանահյուսական և ազգագրական նյութեր՝ հանելուկներ՝ 38 միավոր, երդումներ՝ 10 միավոր, փաղաքշական արտահայտություններ՝ 9 միավոր, անեծքներ՝ 29 միավոր (Зелинский, 1882, сс. 96-98), որոնք որպես խոսքի հմայական զորությամբ որևէ անձի կամ երևույթի վրա ներգործելու միջոցներ, շարունակում են կենցաղավարել ժողովրդի մեջ:

Անեծք-օրհնանքներ

Մատենաշարի հատորներում տեղ գտած անեծքներից շատերն

1 Վերոնշյալ զրույցի տարբերակներին մանրամասն անդրադարձել է բանագետ Թ. Հայրապետյանը («Արքեոիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 360-361):

արտահայտում են անիծողի զայրույթը, որն անիծվողին ցանկանում է պատժված տեսնել և նրան կամ նրա մոտ հարազատին ուղղում է մեռած տեսնելու անեծքներ (Հարությունյան, 1975, էջ 199):

1. Чтобы ты не мог достигнуть венца венчания! Թագ ու փափկի չհասնես (Зелинский, 1882, с. 96):

2. Да похоронить мне тебя, сынок! Քիզ հորիմ, բալամ (Зелинский, 1882, с. 96):

3. Да похоронить мне твоего возлюбленного! Քո սիրականդ հորեմ (Зелинский, 1882, с. 96):

4. Да померт надежда твоя (т.е. да померет муж твой). Ումուղդ մեռնի (Зелинский, 1882, с. 96):

5. До померет сын твой! Տղադ մեռնի (Зелинский, 1882, с. 97):

6. Будь ты проклят! Անիծվես (Зелинский, 1882, с. 97):

Փաղաքական խոսքեր

1. Душа! Հոգի ջան (Зелинский, 1882, с. 96):

2. Свет глаз моих! Աչքիս լույսը (Зелинский, 1882, с. 96):

3. Пусть буду жертвою росту твоему! Բոյիդ դուրբան (Зелинский, 1882, с. 96):

4. Умереть мне ради твоей души! Չանիդ մեռնիմ (Зелинский, 1882, с. 96):

Երդումներ

Երդումների գերակշիռ մասում վկայակոչում են աստծուն, խաչին, ինչը վկայում է, որ այս արտահայտություններն օգտագործվել են անձի անմեղությունն ապացուցելու համար:

1. Богу известно! Աստծոյն յայտնի է (Зелинский, 1882, с. 95):

2. Этот крест свидетель! Այս խաչը վկայ է (Зелинский, 1882, с. 95):

3. Та церковь свидетельница. Այն եկեղեցին վկայ է (Зелинский, 1882, с. 95):

Երդումների, անեծքների ու փաղաքական արտահայտություններից մի քանիսում կան հեթանոսական ժամանակների, բնության երևույթների՝ մասնավորապես արևի պաշտամունքի մնացուկներ.

1. То солнце свидетель! Այն արևը (արեգակը) վկա է (Зелинский, 1882, с. 95):

1. Умереть мне ради твоего солнца! Արևիդ մեռնիմ (Зелинский, 1882, с. 95):

2. Да померкнет солнце твое! Արևդ խավարի (Зелинский, 1882, с. 97):

Առած-ասացվածքներ

34-րդ համարի 3-րդ բաժնում Քոբայիսի ուսուցչական ճեմարանի տնօրեն Վ. Դավիթյանը Կարսի շրջանից հավաքված նյութերում ներկայացնում է 252 միավոր հայկական ասացվածքներ (Дпвицкий, 1904, сс. 45-55): Նույն համարում Քոբայիսիի գիմնագիայի ուսուցիչ Օ. Յազիկովան՝ 100 միավոր առած-ասացվածքներ (Языкова, 1904, сс. 56-62), Բուկիարթովը՝ 338 միավոր (Буниатов, 1904, сс. 63-88): Մատենաշարի 2-րդ հատորի երկրորդ մասում Երևանի գիմնագիայի ուսուցիչ Չելիսյանը ներկայացնում է 92 միավոր ասացվածքներ (Зелинский, 1882, сс. 85-91):

Օրինակ՝

1. Что для кошки игра, то для мышки смерть (Дпвицкий, 1904, с. 55). Կատվի խաղը, մկան մահը (Ա. Կիրակոսյան, ԴԲՆ, Արամուս, 2018): Для кошки игра, а для мышки- смерть (Зелинский, 1882. с. 91).

2. Ворону спросили, какая между птицам самая красивая, она отвечала: “вороненок” (Дпвицкий, 1904, с. 45). Ագռավի ճուղը մոր համար սիրուն ա (Ղանալանյան, 1960, էջ 262: Ա. Կիրակոսյան, ԴԲՆ, Արամուս, 2018):

3. Многознающая лисица обеими ногами в капкан попадает (Дпвицкий 1904, с. 54). Փորձված աղվեսը երկու ոտով ա թակարդն ընկնում (Ղանալանյան Ա., 1960, էջ 17: Կիրակոսյան Ա., ԴԲՆ, Գեղաշեն, 2018):

4. Аппетит под зубами бывает (Зелинский С., 1882, с. 87). Իշտահը (ախորժակը) ատամի տակ է (Կիրակոսյան Ա., ԴԲՆ, Ավշար 2017):

5. Лисица, которая не могла нарвать винограда, сказала, что он не зрелый (Дпвицкий, 1904, с. 46). Աղվեսի դուռը խաղողին չի հասնում, ասում ա թթու ա (Ղանալանյան, 1960, էջ 78: Կիրակոսյան, ԴԲՆ, Ավշար, 2017):

Այս վերջին առածը համադրվում է «անտիկ դարաշրջանից ի հայտ եկած խաղողի ողկույզին մեկնած աղվեսի դնչի քանդակի հետ, որը ռուս մշակույթի պատմաբան Կինժալովի սրամիտ մեկնաբանությամբ ժողովրդական հայտնի առակի պատկերացումն է, որից մնացել է արդի բանահյուսության առածային բանաձևը՝ «Աղվեսի դուռը խաղո-

դին չհասավ, ասաց խակ է»» (Ս. Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, էջ 33-34):

Ժողովրդական աղոթքներ

Վերոհիշյալ ազգագրական հավատալիքներից բացի մատենաշարում հայերեն և ռուսերեն լեզուներով տեղ են գտել նաև Քրիստոսի անունով չարը խափանելու աղոթքներ, որոնք մատենաշարում գուգահեռաբար ներկայացված են հայերեն և ռուսերեն լեզուներով:

«Որդի ես, Հայր ես, բարի ես, Քրիստոսի հովիվն: Է՞րես Նստել վր. Ճամփին (ճանապարհի վերայ), Է՞րես լալի, Է՞րես աղաղակելի: Տոր չլամ, տոր չաղաղակեմ գիշերու ան գողեն, ցերեկուան դուշմանեն (թշնամուց), գելեն (գայլեն), գազանեն, քառսուն (քառասուն) ոտհանց բոլոճեն (գեռունեն): Որդոյ Յարութեան կերծակով (կայծակով), Աստուածամոր ծնի կաթով, սև ձիան պոչի ձարով (մազով), կապած մաք, կալած կենաք միկչև գալուստ Քրիստոսի» (Зелинский, 1882, с. 49):

“Сын ли ты, или отец, ты добр, пастух Христа. Зачем сидишь на дороге, зачем плачешь? Как не плакать, как не рыдать от руки ночных воров, дневных врагов, волков, зверей, змей, скорпионов и сороконожных насекомых? Молнией Сына Воскресшего, молоком груди Богоматери, волосом хвоста черной лошади оставаться вам связанным, удержанным до пришествия Христа” (Зелинский, 1882, с. 49).

Մատենաշարի հատորներում տեղ են գտել նորապսակներին, ծննդկանին, նորածնին չվնասելուն ուղղված ծիսական գործողություններ և այլ սնահավատություններ:

Երեխա չունեցող կնոջ վրա տարին մեկ անգամ Աստվածահայտնության օրը «քառասունը էին թափում»՝ գլխին լցնելով 40 բաժակ ջուր՝ արտասանելով ինչ-որ սրբի անուն (Зелинский, 1882, с. 49)¹: Ծննդաբերության ժամանակ երկաթե խաչեր էին դնում այն սենյակի բոլոր չորս պատերին, որտեղ գտնվում է ծննդկանը՝ հավատալով, որ սատանաները չեն կարողանա երեխային շուռ տալ մոր արգանդում (Зелинский, 1882, с. 50): Ծննդկանին չար ուժերից պաշտպանելու համար գլխի տակ աղոթագիրք և դաշույն էին դնում կամ չար ուժերի ազդեցությունը խափանելու համար աղոթք էին կարդում:

«Թագա խացի (նոր թխած հացի) խոտ (հոտ) է կալի: Եկան երեք ձիաւոր, երեքն էլ կանանչ կապաւոր. Մէկն Յիսուս, մէկն Քրիստոս, երրորդն դերկանց Սուրբ Աստուածածին: Ելան սարով, էլան ձորով,

իր (ուր) կերթան շատ եարաղով (զենքով), ծննդկանի տունն է բարով: Չիսքի թախենք (շխթոց քցենք) բոլոր բարձով, չվախենայ սիրտն ի փորին միսը և գալուստ Քրիստոսին» (Зелинский, 1882, с. 50):

“Слышен запах свежего хлеба. Приехали три всадника и все трое в зеленых капах (род платья). Один из них Иисус, другой Христос, а третий Дерская (название местности) св. Богородница. Поднялись по горе, спустились по долине, куда ни шли со множеством оружия. Добро в дом родильницы (принесите в дом родильницы добро или добро пожаловать), оцепим подушки цепью, пускай не боится сердце в животе до пришествия Христа. (Зелинский, 1882, с. 50):

Այս աղոթքի չափածո տարբերակները տեսնում ենք Ս. Հարությունյանի «Հայ հմայական ժողովրդական աղոթքներ» գրքում, գրառված Ջավախքից, Ախալցխա-Օռտլուտից, Բայազետից, Վաղարշապատից և այլ ազգագրական շրջաններից: Լալայանի երկերում, Էմինեան ազգագրական ժողովածուում:

Թագա հացի ֆոտ Էկավ./Ելեք աշեցեք վո՞վ Էկավ, /Իրեք իրեք պոզ ձիավոր, Իրեքն ա կանանչ կապավոր, /Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս, /Մեկը տղա մանուկ սուրբ Կիրակոս: /Էկավ սարով, իջավ ձորով Հրեշտակին դեմը բարով (Հարությունյան, 2006, էջ 49)...

Աղոթքի բովանդակությունից պարզ է դառնում, որ աղոթք կարդացողը և ծննդկանը սպասում են երեք սուրբ ձիավորների ժամանելուն, որպեսզի վերջիններս պահպանեն ծննդկանի և նորածնի առողջությունը:

7-րդ թողարկման 2-րդ բաժնում Շամախի քաղաքի ուսուցիչ Քալաշևը ներկայացնում է տեղի հայերի ծավալուն անեկդոտները՝ 5 միավոր (Калашев, 1889, сс. 129-135):

Հանելուկներ

Մատենաշարի 13-րդ հատորի առաջին մասում Թարթառի հայաբնակ Սարով գյուղի դպրոցի տեսուչ Գրիգորովը ներկայացնում է տեղացիների սովորույթները, նախապաշարմունքները (71 միավոր), հանելուկները (20 միավոր) (Григоров, 1892, сс. 123-124):

1. Вережка (привязка) воды написал, а распух теленок. (Арбуз и арбузный куст) (Григоров, 1892, с. 123).

2. С горе и скал бежить разъяренный лев. (Вода) (Григоров, 1892, с. 123).

3. Черная курица, но без крови, дышет, но не жива. (мех кузнечный) (Григоров, 1892, с. 124).

Երևանի գիմնազիայի ուսուցիչ Ս. Չելիսսկին (երկրորդ հատոր,

երկրորդ մաս) ներկացնում է երկլեզու հանելուկներ (38 միավոր) (Зелинский, 1881, сс. 91-95):

1. Сброшу с горы не разобьется, в воду положу разобьется. (бумага)/ Սարեն քցեմ չի կոտրուի, ջուրը քցեմ կջարդուի (Зелинский, 1881, с. 92):

2. Есть у меня дом, где помещается 1000 душ, но не помесится один сноп сена. (муравейник)/ Մի տուն ունիմ հազար ջան կտանի, ամա մի խորց խոտ չի տանի (Зелинский, 1881, с. 92):

3. Четыре брата под одной шапкой стоят. (Стол)/ Չորս եղբարր մի գդակի տակ (Зелинский, 1881, с. 92):

Նավասարդի երգ

Նավասարդը ներկայացվում է որպես առաջին աշնանային տոն և Նոր տարվա սկիզբ: Երեխաների խումբը շրջում էր կտուրներով, տոնական մթերք պահանջում երդիկներից դատարկ գուլպա իջեցնելով: Այդ ընթացքում երգում էին հետևյալ երգը, որը СМОМПК-ի հատորում պահպանվել է հայերեն և ռուսերեն լեզուներով.

Ակլը մարեմ, մարեմ, /Ձեր տղայի սուր կարեմ, /Չամիչ տուէք, /Ատամ-նեքսշարեմ: Ընկոյզ տուէք, /Ճակատիս դնեմ, /Լուշ տուէք, /Պորտս օլորեմ: (Эта строка непонятная). /Сошью башмак сыну вашему. /Изюм дайте /На зубы свои нанижу, /Орех дайте, /На лоб свой положу, /Миндаль дайте, /Пукок свой скручу.

Մատենաշարի հատորներում տեղ են գտել նաև հայոց մեջ մեծ տարածում ունեցող ազգագրական ծեսեր ու հավատալիքներ, սատանաներից պաշտպանվելու ժողովրդական մեթոդներ (Мелик-Шахназаров, 1904, с. 91): Օրինակ՝ չորեքշաբթի օրը երեխային լողացնելու արգելքը, որպեսզի սատանաները չխփեն կամ Նորածնին գիշերը դուրս հանելիս ձեռքի մեջ ածուխ դնել չար ոգիներին վախեցնելու համար (Мелик-Шахназаров, 1904, с. 91), որի ավելի տարածված և հայտնի տարբերակը երեխայի կրծքին հաց դնելն է (Կիրակոսյան, ԴԲՆ, Երևան 2017, Մայակովսկի 2018, Լճաշեն 2019, Լանջադեյուր 2019):

“Забота о здоровье” 5 միավոր առողջության պահպանմանն ուղղված գործողություններ: Օրինակ՝ հավկուրությանը չտառապելու համար ուրբաթ գիշերը չաշխատել, կիրակի օրը եղունգ չկտրել, կիրակի ծծկեր երեխայի ձեռքերը չլվանալ, այլապես ամբողջ կյանքում ձեռքերը կդողան (Мелик-Шахназаров, 1904, с. 93):

Եզրակացություններ

ՇՄՈՄՈՒԿ-ի հատորներում թարգմանաբար լույս տեսած բանահյուսական նյութերը՝ գրառված Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Բաքվի, Երևանի Նահանգներից, Չանգեզուրի, Նախիջևանի, Էջմիածնի գավառներից հիմնականում պատկանում են ժանրերի հնագույն տիպերին, որոնք գալիս են դարերի խորքից և գրեթե անփոփոխ կենցաղավարում են մինչ օրս, սյուժետային և մոտիվային բազմազան զուգահեռներով իրենց ընդհանրություններն ունեն միջազգային բանահյուսական մշակույթում: ՇՄՈՄՈՒԿ մատենաշարի էջերում զետեղված հայ բանահյուսությունը հսկայածավալ, բազմաժանր և բազմաբնույթ է:

1. Բանավոր պատումային արձակ՝ զրույցներ, բացատրական, վարքաբանական, ստուգաբանական, կրոնական ավանդազրույցներ:

2. Քնարական բանահյուսություն՝ ծիսական երգեր:

3. Ծիսական և բանածնային-ասույթաբանական բանահյուսություն՝ Նավասարդի երգ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, բարեմաղթանքներ, փաղաքշական խոսքեր, ժողովրդական աղոթքներ, հանելուկներ, երգումներ:

Վերոնշյալ բանահյուսական նյութերը վկայում են քննության ենթակա ժամանակաշրջանում (19-րդ դ. վերջ և 20-րդ դ. սկիզբ) հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության բազմազանության մասին, որոնք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի պատմաշխարհագրական տարբեր շրջաններից գրառված նյութերի ընդհանրական արեալի հետ և ցայսօր կիրառվում են հայոց մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբեղյան Մ.**, Երկեր, հատոր Է, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 604 էջ:

2. **Թադևոսյան Ա.**, Դարբինը հայոց ծիսակարգում (պատմագագրական ուսումնասիրություն) // Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ 23, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2007, 188 էջ:

3. **Լալայեան Ե.**, Վասպուրական: Հաւատք. Լեռների, քարի, ջրի, բոյսերի, կենդանիների, կրակի, արևի, շէմքի, Նախնիների, ոգիների պաշտամունք // Ազգագրական հանդես, Գիրք XXV, Թիֆլիս, 1913, № 2, էջ 21-60:

4. **Կիրակոսյան Ա.**, Դաշտային բանահյուսական նյութեր, Արարատի մարզ, Ավշար 2017:

5. **Կիրակոսյան Ա.**, Դաշտային բանահյուսական նյութեր, Կոտայքի մարզ, Արամուս, 2018:

6. Կիրակոսյան Ա., Դաշտային բանահյուսական նյութեր, Կոտայքի մարզ, Գեղաշեն, 2018:

7. Կիրակոսյան Ա., Դաշտային բանահյուսական նյութեր, Կոտայքի մարզ, Մայակովսկի 2018:

8. Կիրակոսյան Ա., Դաշտային բանահյուսական նյութեր, Երևան 2017:

9. Կիրակոսյան Ա., Դաշտային բանահյուսական նյութեր, Գեղարքունիքի մարզ, Լանջաղբյուր 2019:

10. Կիրակոսյան Ա., Դաշտային բանահյուսական նյութեր, Գեղարքունիքի մարզ, Լճաշեն 2019:

11. Հաճեան Հ., Հին աւանդական հեքեաթներ խոտորջրոյ, «Խաչ շալկող տղին հեքեաթն» (խոտորջուր), Վիեննա, Ի Վանս պաշտպան Ս. Աստուածածնի, 1907, 89 էջ:

12. Հայրապետյան Թ., Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 462 էջ:

13. Հայրապետյան Թ., Սևելու մշակույթը հայ բանավոր ավանդության մեջ (առօրյա, տոնածիսական և առասպելաբանական մակարդակները) // Պատմաբանասիրական հանդես, 2022, № 2, էջ 216-240:

14. Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, Հայկական ՍՍՀ հրատարակչություն, 1975, 270 էջ:

15. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 264:

16. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Երևան, Անտարես, 2018, 528 էջ:

17. Դանալանյան Ա., Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960, 396 էջ:

18. Դանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, 530 էջ:

19. Նուրիան, Ոսկի ձուկը, Հայկական աւանդալէա // Բիւրակն, Կ. Պօլիս, 1898, № 3, էջ 47-48:

20. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, 568 էջ:

21. Буниатов Г., Армянские пословицы, приметы // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск тридцать четвертый, отдел III, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе и к Козловского, 1904, сс. 63-90.

22. Буниатов Г., Легенды об Александре Македонском // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск

двадцать восьмой, отдел II, Тифлис, 1900 Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе, к Козловского и М. Мартиросянца, с. 10.

23. Бунитов Г., Согомон Мудрый и пастух // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск двадцать четвертый, отдел II, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе и к Козловского, 1898, сс. 101-102.

24. Григоров Н., Село Татев // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск тринадцатый, отдел I, Тифлис, Типография канцелярии главноначальствующего гражданскою частью на Кавказе, 1892, на Кавказе, 1882, сс. 59-125:

25. Дпвицкий В., Пословицы греческие, турецкие, татарские и армянские, собрание в Карсской области // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск тридцать четвертый, отдел III, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе и к Козловского, 1904, сс. 34-55.

26. Зелинский П., Этнографические очерки из быта армян переселенцев из Персии живущих в Нахичеванском уезде, Эриванской губернии // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск второй, отдел II, Тифлис, Типогр. главы. Управл. главноначальствующего гражд. частью на Кавказе, 1882, сс. 1-98.

27. Израелов Г., Еврей и Серебряк // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск седьмой, отдел II, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе, 1889, сс. 86-87.

28. Мелик-Шахназаров Е., Из древностей селение Чанахчи // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск девятнадцатый, отдел I, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе, 1894, сс. 78-83.

29. Мелик-Шахназаров Е., Из поверий предразсудков и народных примет армян Зангезурского уезда // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск тридцать четвертый, отдел III, Тифлис, 1904, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе и к Козловского, 1904, сс. 91-124.

30. Тониев П., Чистая вера спасает от огня // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск двадцать восьмой, отдел II, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе, К. Козловского и М. Мартиросянца, 1900, с. 22.

31. Ширакуни Н., Зангезурский уезд Елизаветпольской губернии // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск тридцать четвертый, отдел II, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе и к Козловского, 1904, сс. 182-217.

32. Языков О., Армянские пословицы и поговорки // Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск тридцать четвертый, отдел III, Тифлис, Типография Канцелярии главноначальствующего гражданскую частью на Кавказе и к Козловского, 1904, сс. 56-62.

33. Hans-Jorg Uther, The Types of International Folktales. A Classification and Bibliography. Part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales, and Realistic Tales, with an Introduction, Helsinki, 2011, 619 p.

REFERENCES

1. Abeghyan M., Yerker, hator E. / Works, Vol. 7/, Yerevan, 1975, ASS NA publishing house, 604 p.

2. Tadevosyan A., Darbine hayots tsisakargum (patazgagrakan usumnasirutyun)/, The blacksmith in the Armenian ritual (historical ethnographic research) // Armenian ethnography and folklore, Materials and Studies 23/, Yerevan, publishing house "Gitutyun" of NAS RA, 2007, 188 p.

3. Lalayean E., Vaspurakan. Havatq: Lemer, qari, jri, boyseri, kendanineri, kraki, arevi, shemqi, nakhnineri, vogineri pashtamunq/, Vaspurakan. Faith: worship of mountains, stones, water, plants, animals, fire, the sun, the threshold, ancestors, spirits // "Ethnographic Journal", vol. 25, №2/, Tbilisi, 1913, 21-60 pp.

4. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Ararat province, Avshar, 2017.

5. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Kotayk province, Aramus, 2018.

6. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Kotayk province, Geghashen, 2018.

7. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Kotayk province, Mayakovski, 2018.

8. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Yerevan, 2017.

9. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Gegharqunik province, Lanjaghbyur, 2019.

10. Kirakosyan A., Dashtayin banahyusakan nyuter/ Field folklore materials/ Gegharqunik province, Lchashen, 2019.

11. Hachean H., Hin avandakan heqeatner Khotjro/, Old traditional tales of Khotorjur, "The tale of the cross-carrying boy" (Khotorjur)/ Vienna, "I vasn pashtpan S. Astvatatsni", 1907, 89 p.

12. **Hayrapetyan T.**, Arqetiprayin haraktsumnere haykakan hrashapatum heqiatnerum ev vipapatmakan banahyusutyan mej/, Combination of archetypes in Armenian tales of magic and epic heritage/, Yerevan, publishing house "Gitutyun" of NAS RA, 2016, 462 p.

13. **Hayrapetyan T.**, Snvelu mshakuyte hay banavor avandutyan mej/, Armenian oral tradition (Daily, feast and ritual, and mythological levels)/, Historical-philological journal/, Yerevan, publishing house "Gitutyun" of NAS RA, 2022, № 2, 216-240 pp.

14. **Harutyunyan S.**, Anetsqi ev orhnanqi janre hay banahyusutyan mej/, The genre of curse and blessing in Armenian folklore/, Yerevan, Armenian SSR publishing house, 1975, 270 p.

15. **Harutyunyan S.**, Banagitakan aknarkner/, Essays on folklore studies/, Yerevan, Publishing house "Gitutyun" NAS RA, 2010, p. 264:

16. **Harutyunyan S.**, Hay araspelabanutyun/, Armenian mythology/, Yerevan, Antares, 2018, 528 p.

17. **Ghanalanyan A.**, Aratsani/, Collection of proverbs/ Yerevan, ASSR NA publishing house, 1960, 396 p.

18. **Ghanalanyan A.**, Avandapatum/, Armenian Traditions/, Yerevan, Armenian SSR NA publishing house, 1969, 530 p.

19. **Nurhan**, Voski dzuke, Haykakan avandavep/, The golden fish, Armenian traditional novel/ Byurakn, Constantinople, 1898, № 3, pp. 47-48:

20. **Srvandztyants G.**, Yerker, hator 1/, Works, Vol. 1/ Yerevan, Armenian SSR NA publishing house, 1978, 568 p.

21. **Buniatov G.**, Armyanskie poskovitsi, primeti/, Armenian proverbs, omens/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. thirty-fourth, part III/, Tiflis, Publishing house of the Office of the main commander of the civilian part in the Caucasus and Kozlovsky, 1904, 63-90 pp.

22. **Buniatov G.**, Legendi ob Aleksandre Makedonskom/, Legends about Alexander the Great/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. twenty-eight, part II/, Tiflis, Publishing house of the Office of the head of the civilian unit in the Caucasus, Kozlovsky and M. Martirosyants, 1900, 10 p.

23. **Buniatov G.**, Soghomon mydriy i pastukh/, Soghomon the Wise and the Shepherd/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the

Caucasus, vol. twenty-four, part II/, Tiflis, Publishing house of the Office of the main commander of the civilian part in the Caucasus and Kozlovsky, 1898, 101-102 pp.

24. Grigorov N., Selo Tatev/, Tatev village/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. thirteenth, part I/, Tiflis, Publishing house of the office of the chief of the civilian unit in the Caucasus, 1982, 59-125 pp.

25. **Dpvintskiy V.**, Poslovitsi grecheskie, turetskie, tatarskie i armyanskie, sobranie v Karsskoy oblasti/, Greek, Turkish, Tatar, and Armenian proverbs, collection in the Kars region/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. thirty-fourth, part III/, Tiflis, Publishing house of the Office of the Commander-in-Chief of the Civil Unit in the Caucasus and Kozlovsky, 1904, 34-55 pp.

26. **Zelinskiy P.**, Etnograficheskie ocherki iz bita armyan pereselentsev iz Persii zhivuyushikh v Nakhichevanskom uezde, Erivanskom Gubernii/, Ethnographic essays from the life of Armenian settlers from Persia living in the Nakhichevan district, Erivan province/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. second, part II/, Tiflis, Publishing house of the Office of the Commander-in-Chief of the Civil Unit in the Caucasus, 1882, 1-98 pp.

27. **Izraelov G.**, Evrey i serebryak/, The silversmith and the Jew/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. seventh, part II/, Tiflis, Publishing house of the Office of the main commanding civilian unit in the Caucasus, 1889, 86-87 pp.

28. **Melik-Shakhnazarov E.**, Iz drevnostey selenie Chanakhchi/, Antiquities from Chanakhchi village/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. nineteen, part I/, Tiflis, Publishing house of the Office of the main commanding civilian unit in the Caucasus, 1894, 78-73 pp.

29. **Melik-Shakhnazarov E.**, Iz poveriy predrazsudkov i narodnikh primet armyan Zangezurskogo uezda/, From the beliefs of prejudices and folk beliefs of the Armenians of Zangezur district/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. thirty-fourth, part III/, Tiflis, Publishing house of the Office of the main commander of the civilian part in the Caucasus and Kozlovsky, 1904, 91-124 pp.

30. **Toniev P.**, Chistaya vera spasaet ot ognya/, Pure faith saves from fire/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. twenty-eighth, part II/, Tiflis, Publishing house of the Office of the head of the civilian unit in the Caucasus, Kozlovsky and M. Martirosyants, 1900, 22 p.

31. **Shirakuni N.**, Zangezurskiy uезд Elizavetpolskoy gubernii/, Zangezur district of the Elizavetpol province/, Collection of Materials for the Description of

Localities and Tribes of the Caucasus, vol. thirty-fourth, part II/, Tiflis, Publishing house of the Office of the main commander of the civilian part in the Caucasus and Kozlovsky, 1904, 182-217 pp.

32. Yazikov O., Armyanskie poslovitsi i pogovorki/, Armenian proverbs and sayings/, Collection of Materials for the Description of Localities and Tribes of the Caucasus, vol. thirty-fourth, part III/, Tiflis, Printing house of the Office of the main commander of the civilian part in the Caucasus and Kozlovsky, 1904, 56-62 pp.

33. Hans-Jorg Uther, The Types of International Folktales. A Classification and Bibliography. Part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales, and Realistic Tales, with an Introduction, Helsinki, 2011, 619 p.

Ալինա Կիրակոսյան - մշակութաբան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, նույն ինստիտուտի Բանահյուսության տեքստաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող: Հետաքրքրությունների

շրջանակն ընդգրկում է մշակութաբանությունը, բանահյուսությունը, հայ ժողովրդի ոչ կյուբական մշակութային ժառանգությունը: Ունի տպագրված 2 հոդված, «Սյունիքի բանահյուսությունը» բանահյուսական կյուբերի ժողովածուի համահեղինակ (Երևան, 2020):

<https://orcid.org/0000-0003-0645-2270>

alinokkirakosyan@gmail.com,

Алина Киракосян - культуролог, соискатель института археологии и этнографии Национальной Академии Наук РА, младший научный сотрудник отдела Текстологии фольклора того же института. Круг интересов включает культурологию, фольклор, нематериальное культурное наследие армянского народа. Имеет 2 опубликованные статьи, соавтор сборника фольклорных материалов “ Фольклор Сюника “ (Ереван, 2020).

<https://orcid.org/0000-0003-0645-2270>

alinokkirakosyan@gmail.com,

Alina Kirakosyan - culturologist, PhD. Student at the Institute of Archeology and Ethnography NAS RA, junior researcher at the department of Folklore textology of the same institute. Range of interests is including cultural studies, folklore studies, intangible cultural heritage of the Armenian people. Has published 2 scientific articles, also co-author of the collection of folklore materials “The Folklore of Syunik” (Yerevan, 2020).

<https://orcid.org/0000-0003-0645-2270>

alinokkirakosyan@gmail.com,